մուլթէզիմը, ոչ կաշառակեր ու անիրաւ դատաւորներ, ոչ անգութ զափ-թիա և հաղարաւոր ցեցեր ու կեղեքիչ պաշտօնեաներ,—բայց և այնպէս էլի գիւղացին աղքատ է. ուտելու հաց չէ գտնում։ Եւ այդ բոլոր թշառութեան պատճառը այն է՝ ինչպէս երևում է նրանց պատմածներից, որ գիւղացին շատ տեղերում հող քիչ ունի, իսկ տեղ տեղ էլ բոլորովին չունի։

Մալիսին ինձ պատահեցան այդպիսի անհող ռուս գիւղացիներից երկաթուղու ճանապարհին՝ Բաթումի գծի վրայ։ Նրանք մի քանի տուն էին, մօտ 20 հոգի. գալիս էին Լիպովէցկի գաւառից և պէտք է Թիֆլիսի վրայով Վլադիկաւկազ կողմերը գնային։ Ասեցին, որ իրանց գաւառից արդէն 20 տուն գաղթողներ են եղել այդ կողմերը և իրանք էլ նրանց մօտ են գնում։ Ահա թէ ինչ էին պատմում նրանք։ Իրանք հայրենիքում հող չեն ունեցել. ուրիշի հողերն են բանել կապալով. այն էլ միայն գործարանների համար ճակնդեղ են մշակել, որովհետև ուրիշ ոչ մի բերք դրանից ուելի արդիւնք չէ տալ։ Իսկ այդ արդիւնքը սարսափելի չնչին բան է եղել։ Երևակայեցէք ողջ ամառը մի դեսեատին ուրիշի տեղի վրայ քրտնելուց ու բանելուց միմիայն 8 ռուբլի վարձ են ստանալիս եղել։ Ամառուան օրավարձը ամենաշատը 20 կոպէկից չէ անցել։ Այդ փողով խեղճ գիւղացին համ պիտի իր հացն ուտէր, համ իր բանեցրած եզան, համ ձիան ուտեցնէր, համ տունը պահէր և համ էլ միւս կարիքները տեսնէր... «Ղաղթում ենք, որովհետև հող չունենք, ապրելու միջոց չունենք, нечѣмъ жить» կրկնում էին նրանք։

Իսկ գիւղացին հող չունենալ և ապրի,—այդ միևնոյն է, թէ մարդ կենդանի մնալ առանց արիւնի և հոգու։ Եթէ միայն հող չունենալն այդքան թշառութիւն է, որքան ուելի՝ երբ տնտեսական այդ մեծ զրկանքի հետ, անհողութեան հետ, միացած են լինում և հարիւրաւոր ուրիշ չարիքներ—կեանքի և գոյքի անապահովութիւնը, կատարեալ անարդարութիւնն ու անգթութիւնը և կեղեքիչ ու վաշխառու բռնակալների անսանձ կամայականութիւնները, որոնք կարող են կարճ միջոցում բոլորովին քամել և ուժաթափ անել ժողովուրդը, եթէ վերջ չդրուի այդ անարդար հալածանքներին։

Այսօր հայը այդ վիճակի մէջ է իր հայրենիքում՝ թիւրքական լծի տակ։